ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

20 սեպտեմբերի շաբաթ 2025
տպագրության ԺԴ տարի

126
(3157)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԱԽԱՐԱՐ «ՊՕ ВЫЗОВУ», ԿԱՄ ԻՆՉՊԵՍ ԽԵՂԱԹՅՈՒՐԵԼ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթը հարկ է համարում արձագանքել Մարտունու բժշկական կենտրոնի տարածած պարզաբանմանը, որով առավել խայտառակ վիճակում են հայտնվել պաշտոնյաները:

Նախ արձանագրենք՝ երեկ հրապարակված մեր հոդվածում գրված էր, որ կիրակի օրվա հանդիպումը տեղի է ունեցել հենց Մարտունու բժշկական կենտրոնում: ԲԿ-ն իր պարզաբանմամբ արդեն հաստատում է, որ նախարարի այցը եղել է հիվանդանոցում, եւ ներկա են եղել մեր նշած անձինք՝ տնօրեն Անդրանիկ Հարությունյանը, ինչպես նաեւ Մարտունու պետական բժշկական քոլեջի տնօրեն, ՔՊ ավագանու անդամ Տարոն Արշակյանը: Այսինքն՝ մենք որեւէ փաստ չենք խեղաթյուրել:

Հաջորդ՝ այցը տեղի է ունեցել կիրակի օրը: Հարց է ծագում՝ եթե նախարարի այցն իսկապես կապված էր բացառապես աշխատանքային հարցերին, ինչո՞ւ այն պետք է կազմակերպվեր ոչ աշխատանքային օրով: Այսինքն, նախարարին, որ ԲԿ տնօրենը կիրակի օրով հրավիրի, գնալո՞ւ է: Սա ինքնին վկայում է այն փաստի մասին, որ այդ այցը չէր կրում դասական աշխատանքային բնույթ:

Բացի դրանից, պարզաբանման մեջ նշվում է, թե քննարկվել են բժշկական քոլեջի շենքային պայմանները: Մինչդեռ այդ ուսումնական հաստատությունը ԿԳՄՍ նախարարության ենթակայության տակ է գտնվում եւ որեւէ առնչություն չունի առողջապահության նախարարության հետ: Ինչու էր առողջապահության նախարարն այս հարցով զբաղվում՝ պարզ չէ:

Այս ամենը կրկին փաստում է, որ այցը ծառայել է ոչ թե մասնագիտական խնդիրների լուծմանը, այլ քաղաքական շահերին: Ավելին՝ Մարտունու ԲԿ-ն իր պարզաբանմամբ, փաստորեն, ընդունում է, որ նախարարը շեղվել է առողջապահական օրակարգից եւ մտել կուսակցական քարոզչական դաշտ:

Արդյունքում ստացվում է, որ ոչ միայն մեր հրապարակած փաստերն են ճիշտ, այլեւ հենց ԲԿ-ն իր հայտարարությամբ հաստատում է դրանք: Այս պարագայում անհասկանալի է մնում, թե ինչու է պետական բժշկական կենտրոնը հանդես գալիս նախարարի «պաշտպանական» հայտարարություններով: Հիվանդանոցի պարտականությունը հիվանդներին սպասարկելն է, ոչ թե նախարարին արդարացնելը:

«Ժողովուրդ» օրաթերթը համոզված է՝ պետական առողջապահական հաստատությունների ղեկավարները պետք է ծառայեն հանրության առողջապահական շահերին, այլ ոչ թե վերածվեն նախարարի քաղաքական որոշումները պաշտպանող խոսափողի:

ՀՀ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանը դիմել է ԱԺ նախագահին՝ 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող ժամանակավոր քննիչ հանձնաժողովի նրստում հնչեցրած իր խոսքերի սղագրությունները ստանալու համար: Սակայն ամիսներ շարունակ ԱԺ նախագահը ոչ պատասխանում, ոչ մերժում, ոչ էլ տրամադրում է դրանք նախկին նախարարին: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հայտնել է հենց ինքը՝ Դավիթ Տոնոյանը: «Ես դիմել եմ ԱԺ նախագահին, որ, ըստ օրենքի, ծանոթանամ արձանագրություններին եւ ունենամ հնարավորություն ծանոթանալու նաեւ զեկույցին, քանի որ դա իմ օրինական պահանջն է: Որպես նախկին պաշտոնյա, որը մասնակցել է քննիչ հանձնաժողովի աշխատանքներին, ես իրավունք ունեմ ծանոթանալու եւ զեկույցին, եւ արձանագրություններին, որը իմ խոսքերից պետք է կազմված լինի, բայց չեն տալիս: Հուսամ՝ կտան»,- հայտնել է Դավիթ Տոնոյանը: Մարդ, պաշտոնյա, որի լուսանկարը ոչ վաղ անցյալում ՔՊ-ական շատ պատգամավորների հեռախոսների էկրանանկարն էր, հիմա արհամարհանք է ստանում նույն ՔՊ-ականների կողմից:

Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանն օրերս հրավիրված մամուլի ասուլիսում անդրադարձավ ԱՆԻՖ ընկերության շուրջ ծավալվող զարգացումներին, որտեղ ինքը եղել է հոգաբարձուների խորհրդի նախագահ: Ավինյանն ակնարկեց, որ պետական կարեւոր նախաձեռնությունները դիտավորյալ ձախողման են տարել. մինչդեռ էկոնոմիկայի նախկին նախարարը ճիշտ հակառակն է պնդում: «Երբ ստեղծվեց այս ընկերությունը, երիտասարդ ուսանողներ ընտրվեցին ամերիկացի գործընկերների կողմից: Նրանք պետք է կիբեռանվտանգության ոլորտում իրենց ծառայությունները մատուցեին պետական եւ մասնավոր կառույցներին», - ասաց Ավինյանը՝ խոսելով ԱՆԻՖ-ի եւ ամերիկյան «Օրբիս» ընկերության համատեղ նախաձեռնության մասին: Ըստ քաղաքապետի՝ ծրագիրը գործարկվել էր հենց 2021 թվականին՝ պատերազմից հետո, երբ ակնհայտ էր, որ Հայաստանը չի համապատասխանում կիբեռանվտանգության ժամանակակից մարտահրավերներին: Սակայն ծրագիրն ավարտվեց դեռ չսկսված՝ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի միջամտությունից հետո: Ավինյանի պնդմամբ Քերոբյանը նախ «նախաձեռնություն է տանում Կառավարություն, որով ԱՆԻՖ-ի ամբողջ փաթեթը տանում է էկոնոմիկայի նախարարություն», իսկ դրանից անմիջապես հետո սկսվում են կադրային կտրուկ փոփոխություններ, որոնք փաստացի հանգեցնում են ծրագրի կազմալուծմանը: «Մարդիկ պետք է պատասխան տան ամեն ինչ քանդելու համար: Եվ արդեն էական չէ, թե նպատակաուղղված են քանդել, թե ոչ», - հայտարարեց Ավինյանը: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում էկոնոմիկայի նախկին նախարար Վահան Քերոբյանը բացատրեց, որ միջազգային կառույցների պահանջով է համակարգման փոփոխություն եղել:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Եվրամիության ընդլայնման հարցերով հանձնակատար Մարթա Կոսը Հայաստան կատարած այցի ընթացքում խոստացել է, որ ԵՄ-ն պատրաստ է աջակցել մեր երկրին տրանսպորտի, թվայնացման, էներգետիկայի, առեւտրի եւ ենթակառուցվածքային նախագծերում: Նա շեշտել է, որ այժմ պատմական հնարավորություն է ստեղծվել՝ Հարավային Կովկասում խաղաղություն հաստատելու եւ Հայաստանը դարձնելու տարածաշրջանային կապերի կարեւոր հանգույց՝ «Խաղաղության խաչմերուկ» գաղափարի շրջանակում: Եվրամիության ընդլայնման հարցերով հանձնակատարը հայտարարեց, որ ԵՄ-ն Հայաստանի համար դիմակայունության եւ աճի ծրագրի երկրորդ փուլի ֆինանսավորումն է հատկացնում: «Ավելի քան 200 միլիոն եվրոյի մասին է խոսքը, որը կխթանի կապակցվածության, դիմակայունության եւ բիզնեսի զարգացման ոլորտում ներդրումները: Սա վկայում է Հայաստանի հստակ բարեփոխումների օրակարգին հավատարիմ լինելու մասին: Սա նաեւ վկայում է ձեր հստակ հանձնառության մասին՝ կարեւոր ոլորտներում բարեփոխումներ իրականացնելուն», - հայտարարեց Կոսը: Սակայն, «Ժողովուրդ» օրաթերթի իրազեկ աղբյուրների փոխանցմամբ, ԵՄ-Հայաստան հարաբերություններում իրական ինտեգրացիան դեռ հեռու է ամբողջական լինելուց: Ըստ մեր տեղեկությունների՝ մի շարք խոչընդոտներ շարունակում են արգելակել գործընթացը՝ սկսած օրենսդրական անհամապատասխանություններից մինչեւ իրավական ակտերի թերի համապատասխանեցում ԵՄ ստանդարտներին:

Շարունակությունը եւ մանրամասները՝ ArmLur.am կայքում:

ԱՐՑԱԽԻ ՊԵՏՆԱԽԱՐԱՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

«ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ը ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՑԱՎԻ, ԿՈՐՍՏԻ ԵՎ ՊԱՅՔԱՐԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆ Է»

Արցախյան վերջին պատերազմի 2-րդ տարելիցի կապակցությամբ՝ Արցախի Հանրապետության պետական նախարար Նժդեհ Իսկանդարյանը հանդես է եկել հայտարարությամբ.

«Սեպտեմբերի 19-ը հայ ժողովրդի պատմության ամենածանր եւ ողբերգական օրերից մեկն է: Այն արցախահայության ցավի, կորստի եւ պայքարի խորհրդանիշն է: Երկու տարի առաջ այս օրը Արցախը վճարեց ամենաբարձր գինը. հայրենի հողը զավթվեց, հազարավոր ընտանիքներ կորցրին իրենց տները, իսկ մի ամբողջ սերունդ՝ իր ապագան: Մեզանից խլեցին մեր խաղաղ ու արժանապատիվ ապրելու իրավունքը:

Այդուհանդերձ, Արցախի հարցը փակված չէ եւ երբեք էլ փակված չի լինելու: Այն բաց վերք է ոչ միայն մեր ժողովրդի, այլեւ միջազգային հանրության խղճի վրա: Մենք պարտավոր ենք շարունակել պայքարը՝ քանի դեռ ապրում է հավատը՝ արդարության, անվտանգության եւ հայրենի հողի վերադարձի հանդեպ:

Այս օրը հիշեցնում է, որ պարտադրված կորուստները չեն կարող ջնջել Արցախի ժողովրդի անքակտելի իրավունքը ապրել իր հայրենիքում»:

Հիշեցնենք, 2023 թվականի սեպտեմբերի 19-ին Ադրբեջանը կրկին ռազմական գործողություններ սկսեց Արցախի Հանրապետության սահմանի ողջ երկայնքով: Արցախյան վերջին պատերազմի ժամանակ Արցախը տվեց շուրջ 224 զոհ, 17 անհետ կորած եւ գերեվարվածներ: Պատերազմական գործողություններին հաջորդեց Արցախի հայաթափումը, որի ժամանակ էլ գերեվարվեցին Արցախի Հանրապետության նախկին նախագահները եւ այլ պաշտոնատար անձինք:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ՔՊ-Ի ԿԵՂԾԻՔՆԵՐԻՑ ԱՆՑԵԼ Է 3 ՏԱՐԻ. ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՆՈՒՄ Է, ՆՈՐ ԿԵՂԾԻՔԻ ՌԻՍԿԵՐԸ՝ ԱՎԵԼԱՆՈՒՄ

Այսօր՝ սեպտեմբերի 20-ին, տեղի է ունենում «Քաղաքացիական պայմանագիր» (ՔՊ) կուսակցության 7-րդ հերթական համաժողովը, որտեղ ձեւավորվելու է իշխող քաղաքական ուժի նոր ղեկավար կազմը: Համաժողովին մասնակցում են շուրջ 1000 պատվիրակներ, որոնք ընտրելու են 42 թեկնածուներից 20-ին՝ որպես կուսակցության վարչության անդամներ: Նոր վարչության ընտրությունից հետո, ըստ կանոնակարգի, կընտրվի նաեւ կուսակցության նախագահը:

Սակայն ՔՊ համաժողովը բովանդակային առումով լուռ հեղափոխություն է հենց կուսակցության ներսում: Իշխող ուժը կարծես մերժում է իր նախկին «ես»-ը՝ հրաժարվելով նախկին խորհրդանիշներից, ավանդական լեզվամշակույթից ու նույնիսկ գաղափարական գծից:

Նորացված ՔՊ-ի ծրագրի հիմքում դրված է «Իրական Հայաստան» գաղափարական մոտիվը: Սակայն այս մոտիվի ներքո ոչ թե զարգացվում է ՔՊ-ի նախորդ քաղաքական գիծը, այլ փաստացի մերժվում է: Օրինակ՝ կուսակցության կանոնադրությունից հանվել է Արարատ լեռան նկարագրությունը, որը նախկինում զարդարում էր կուսակցության լոգոն ու դիտվում էր որպես ազգային տեսլականի խորհրդանիշ:

Այժմ, ըստ նոր տարբերակի, կուսակցության պատկերանշանում միայն երկու ձեռքերի սեղմումն է մնացել: Կուսակցության ծրագիրն էլ գլխիվայր է՝ համեմատած նախորդ ծրագրին: ՔՊ-ն սեփական անցյալի փլատակների վրա նոր ճարտարապետություն է կառուցում:

Հիշեցում անցյալից

Ընտրակեղծիքները մերժող ՔՊ-ի նախորդ վարչության ընտրությունները խայտառակությունով ուղեկցվեցին, որը բացահայտեց «Ժողովուրդ» օրաթերթը դեռ 2022 թվականի նոյեմբերի 2-ին:

Ըստ «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրների՝ կուսակցության վարչության ընտրությունները կեղծվել էին, որի վերահաշվարկից հետո վարչության կազմից դուրս մնացին ԱԺ ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը եւ փոխվարչապետ Համբարձում Մաթեւոսյանը: Նրանց փոխարեն վարչության կազմ անցան Արսեն Թորոսյանը եւ ԱԻ նախարար Արմեն Փամբուխչյանը:

Հրապարակել էինք, որ սկանդալը թիմի ներսում պայթեցրել էր Արսեն Թորոսյանը, որը կուսակցականներից մեկի՝ Տրդատ Սարգսյանի համակարգչում տեսել էր «ընտրական ցուցակ», որտեղ գրված էր՝ ով պետք է անցնի վարչության կազմ, ով՝ ոչ: Թորոսյանը լուսանկարել էր այդ ցուցակը եւ պահանջել վերահաշվարկ, իսկ հետո սկսել էր բողոքարկել բոլոր հնարավոր մակարդակներով:

Հիշեցնենք, որ սա այն նույն կուսակցությունն է, որը տարիներ շարունակ քննադատել է ընտրակեղծիքներն ու լցոնումները, հիմա նույնն է անում՝ իր իսկ թիմի ներսում: Իսկ ԱԱԾ-ն 2022-ից մինչ օրս քննում ու քննում է այս գործը:

ԱՄՆ ՍԵՆԱՏՈՐԻ ԳՐԱՌՈՒՄԸ

ԱՄՆ սենատոր Գարի Փիթերսը իր էջում գրել է. «Երկու տարի առաջ ես այցելեցի Հայաստան, այն բանից հետո, երբ Ադրբեջանը անարդարացիորեն հարձակվեց Լեռնային Ղարաբաղի վրա եւ տեղահանեց ավելի քան 100,000 էթնիկ հայերի:

Այսօր ես շարունակում եմ կանգնած լինել հայ ժողովրդի կողքին, մինչ մենք աշխատում ենք երկարատեւ խաղաղության համաձայնագրի ուղղությամբ, որը կվերականգնի պատճառված վնասը եւ կպաշտպանի Հայաստանի ինքնիշխանությունը»:

ԱՐԾՎԻԿ ՄԻՆԱՍՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՎԱՐԱՐՎԵՑ

ԴատարանԸ երեկ՝ սեպտեմբերի 19-ին, բավարարեց փաստաբանների միջնորդությունը եւ թույլ տվեց ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արծվիկ Մինասյանին մեկնել արտերկիր:

Դատարանը Մինասյանի բացակայելու արգելք խափանման միջոցը վերացրեց:

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԿՄԱՄՆԱԿՑԻ ԵԽԽՎ ՆԻՍՏԵՐԻ

Հայաստանի ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր, ԵԽԽՎ-ում ԱԺ պատվիրակության անդամ Արմեն Գեւորգյանը կգործուղվի Գազիանթեփ (Թուրքիայի Հանրապետություն):

Պատգամավորը Գազիանթեփ կգործուղվի հոկտեմբերի 8-11-ը՝ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի հանուն առողջ շրջակա միջավայրի խորհրդարանականների ցանցի հերթական նիստի, ինչպես նաեւ ԵԽԽՎ սոցիալական, առողջապահության եւ կայուն զարգացման հարցերի հանձնաժողովի Եվրոպայի մրցանակաբաշխության ենթահանձնաժողովի նիստի աշխատանքներին մասնակցելու համար:

ՓԱՇԻՆՅԱՆՆ ՈՒ ՄԱՐԹԱ ԿՈՍԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆ–ԵՄ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է Եվրոպական միության ընդլայնման հարցերով հանձնակատար Մարթա Կոսի գլխավորած պատվիրակությանը:

Ինչպես տեղեկացնում են ՀՀ վարչապետի աշխատակազմից, վարչապետը ողջունել է Մարթա Կոսի այցը Հայաստան եւ բարձր գնահատել Հայաստան-Եվրոպական միություն ակտիվ ու շարունակական երկխոսությունը: Նիկոլ Փաշինյանը շնորհակալություն է հայտնել ԵՄ հետեւողական աջակցության համար՝ ընդգծելով, որ այն կարեւոր դեր ունի ՀՀ կառավարության հավակնոտ բարեփոխումների օրակարգի իրականացման գործում: Նա հավելել է, որ այդ ուղղությամբ համագործակցության ընդլայնումն ամրագրված է նաեւ ՀՀ-ԵՄ գործընկերության նոր օրակարգում:

Հանձնակատար Մարթա Կոսը վերահաստատել է ԵՄ ամուր աջակցությունը Հայաստանի ժողովրդավարական բարեփոխումների արդյունավետ իրագործմանը: Նա նշել է, որ ԵՄ-ն բարձր է գնահատում տարածաշրջանում խաղաղության հաստատման գործընթացը, որը կնպաստի համագործակցության հետագա զարգացմանն ու խորացմանը:

Ըստ աղբյուրի՝ զրուցակիցները քննարկել են Հայաստան-ԵՄ գործընկերության առաջնահերթությունները, առաջիկա անելիքները եւ փոխգործակցության խորացման հնարավորությունները: Անդրադարձ է կատարվել ԵՄ աջակցությամբ Հայաստանում իրականացվող ծրագրերին, տնտեսական գործընկերության խթանման ուղիներին, ինչպես նաեւ վիզաների ազատականացման շուրջ ընթացող երկխոսությանը:

Վարչապետ Փաշինյանը կարեւորել է ԵՄ օժանդակությունը Հայաստանի տնտեսական դիվերսիֆիկացմանը, տրանսպորտային ու ենթակառուցվածքային զարգացմանը, փոքր եւ միջին բիզնեսի կարողությունների ընդլայնմանը: Նշվում է, որ կողմերը պատրաստակամություն են հայտնել շարունակելու սերտ համագործակցությունն՝ ուղղված Հայաստանի ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդմանը, տնտեսական աճի խթանմանը եւ տարածաշրջանում խաղաղության ու կայունության պահպանմանը:

ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿ՝ ՊԵՏԴՈՒՄԱՅՈՒՄ

Պետդումայի պատգամավոր Նիկոլայ Արեֆեւն առաջարկել է Ռուսաստանում ժամանակավորապես անջատել ինտերնետը՝ հնարավոր է, մեկ շաբաթով կամ հանգստյան օրերին: Օրենսդրի կարծիքով՝ առաջարկված միջոցը կօգնի ռուսներին պահպանել տեսողությունն ու նյարդերը, ինչպես նաեւ կնվազեցնի խաղամոլության դեպքերը: Այս մասին հայտնում է «Աբզաց»-ը՝ հղում անելով պատգամավորի խոսքերին:

Պատգամավորը կարծում է, որ ինտերնետի մշտական օգտագործումն ավելի շատ վնաս է բերում, քան օգուտ՝ բացասաբար ազդելով մարդու առողջության, ֆինանսների եւ հոգեկան վիճակի վրա: Պատգամավորի հաշվարկներով՝ գլոբալ ցանցի օգտագործման ժամանակի մինչեւ 70%-ը վնասում է առողջությանը, քանի որ առցանց երկար մնալը վատթարացնում է տեսողությունը եւ հյուծում նյարդային համակարգը:

Արեֆեւն ընդգծել է, որ միլիոնավոր մարդիկ տառապում են խաղամոլությունից՝ կորցնելով զգալի միջոցներ եւ ենթարկվելով լուրջ հոգեբանական խանգարումների: Նա նաեւ նշել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) մտահոգությունն ինտերնետի՝ բնակչության հոգեկան առողջության վրա ազդեցության մասին: Այս կապակցությամբ պատգամավորը համոզված է, որ անհրաժեշտ է պարբերաբար սահմանափակել ցանցում գտնվելու ժամանակը:

ՌԴ Պետդումայի պատգամավոր Նիկոլայ Արեֆեւի առաջարկի արդիականությունը հաստատվում է 2025 թվականի արտասահմանյան ուսումնասիրությունների տվյալներով, ըստ որոնց՝ մարդիկ օրական միջինը 6 ժամ 36 րոպե անցկացնում են համացանցում: Այս մասին գրում է «Աբզաց»-ը՝ նշելով, որ ամենաշատ ժամանակն ինտերնետում անցկացնում են դեռահասները (12-17 տարեկան), ուսանողները եւ 25-34 տարեկան երիտասարդները: 35-44 եւ 45-55 տարիքային խմբերից համացանցը օրական խլում է մոտ հինգ ժամ:

ԻՐԱՆԻ ԵՎ ՌԴ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ՝ ՎԱՌԵԼԻՔԱԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սեպտեմբերի 18-ին Իրանի էներգետիկայի նախարար Մոհսեն Փակնեժադը Թեհրանում հյուրընկալել է Ռուսաստանի էներգետիկայի նախարար Սերգեյ Ցիվիլեւին: Քննարկման հիմնական թեմաներն էին երկկողմ համագործակցությունը վառելիքաէներգետիկ ոլորտում, ինչպես նաեւ ապրիլի 23-25-ը Մոսկվայում կայացած 18-րդ միջկառավարական հանձնաժողովի նիստի արդյունքների իրականացումը:

Հանդիպմանը մասնակցում էին երկու երկրների համապատասխան պետական կառույցների եւ մասնավոր ընկերությունների ներկայացուցիչներ: Կողմերը հատուկ ուշադրություն դարձրեցին նաեւ հաջորդ՝ 19-րդ նստաշրջանի նախապատրաստական աշխատանքներին, որը նախատեսվում է անցկացնել Իրանում:

ՀԱՋԱՐԱՄՅԱԿՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՑԱԽՆ ՕԿՈՒՊԱՑՎԱԾ Է

ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ԱՆՑ

Լրացավ Արցախյան վերջին պատերազմի 2-րդ տարելիցը: Շուրջ 9 ամիս տեւած Արցախի շրջափակումն ընդհատվեց մարտական գործողություններով: 2023 թվականի սեպտեմբերի 19-ին վաղ առավոտվանից Ադրբեջանի զինված ուժերը կրակում եւ ականանետներ էին կիրառում Մարտակերտի շրջանի գյուղերի ուղղությամբ: Արդեն ժամը 13:00-ի սահմաններում Ադրբեջանը հրթիռակոծեց Ստեփանակերտը, որից հետո Արցախի ողջ տարածքում հայտարարվեց օդային տագնապ:

2023 թվականի սեպտեմբերի 19-20-ի ադրբեջանական ագրեսիայի հետեւանքով Արցախը տվել է շուրջ 224 զոհ, որոնցից 25-ը քաղաքացիական անձինք են, զոհերի թվում կան 5 անչափահասներ: Վիրավորվել է 244 մարդ, որից 10-ը անչափահասներ էին: 17 անձ առ այսօր համարվում է անհետ կորած, կան գերեվարվածներ:

Արցախյան վերջին պատերազմին հաջորդեց Արցախի հայաթափումը, որի ժամանակ էլ սեպտեմբերի 25-ին Հայկազովի զորամասի վառելիքի պահեստամասում տեղի ունեցավ պայթյուն: Պայթյունի հետեւանքով զոհվածներիի թիվը հասնում է շուրջ 270-ի:

Կան նաեւ անհետ կորած համարվող անձինք, որոնց մասին առ այսօր տեղեկություններ չկան:

Արցախի հայաթափման օրերին գերեվարվեցին Արցախի Հանրապետության նախկին նախագահներ Արկադի Ղուկասյանը, Բակո Սահակյանը, Արայիկ Հարությունյանը, նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը, Ազգային Ժողովի նախագահ Դավիթ Իշխանյանը, նախկին արտգործնախարար Դավիթ Բաբայանը, գեներալ-լեյտենանտ Լյովա Մնացականյանը, գեներալ-մայոր Դավիթ Մանուկյանը:

Հազարամյակների հայկական Արցախն այսօր ամբողջովին օկուպացված է Ադրբեջանի կողմից:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԵՐԿՐԱՇԱՐԺ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՑԵԼ

Վրաստանում երկրաշարժ է տեղի ունեցել:

Ազգային սեյսմիկ մոնիթորինգի կենտրոնի տվյալներով՝ երկրաշարժի էպիկենտրոնը գտնվել է Դմանիսի քաղաքից 10 կիլոմետր հեռավորության վրա՝ Սողութլո գյուղի մոտակայքում:

Երկրաշարժի ուժգնությունը կազմել է 3.1 մագնիտուդ, իսկ խորությունը՝ 5 կիլոմետր: Ստորգետնյա ցնցումները գրանցվել են Թբիլիսիի ժամանակով ժամը 15:51-ին:

ԱՐՑԱԽԻ ԱԺ-Ի ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ողջ աշխարհին է հայտնի, որ Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի կողմից մեկնարկված լայնամասշտաբ ռազմական ագրեսիան՝ընդդեմ Արցախի Հանրապետության, սկսվել է 2023 թվականի սեպտեմբերի 19-ին: Այս մասին հայտարարություն է տարածել Արցախի ԱԺ-ն: «Այդ օրը դաջված է Արցախի ժողովրդի պատմական հիշողության մեջ:

Արցախի ժողովուրդը շարունակելու է պայքարը իր իրավունքների ճանաչման եւ վերականգնման համար, հանուն արժանապատիվ կյանքի եւ գոյության:

Այդ նպատակով 2025 թվականի սեպտեմբերի 19-ին Արցախի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ նիստում ընդունվել է օրենք՝ "Արցախի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին" օրենքում լրացում կատարելու մասին, համաձայն որի՝ սեպտեմբերի 19-ը այսուհետ կնշվի որպես Արցախի Հանրապետության ժողովրդի բռնի տեղահանության եւ պահանջատիրության օր»,- նշված է հայտարարության մեջ:

ԹՐԱՄՓԻՆ ՔՆՆԱԴԱՏՈՂ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ, «ԳՈՒՅԵ» ԶՐԿՎԵՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻՑ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը կարծիք է հայտնել, որ որոշ լրատվամիջոցներ պետք է զրկվեն իրենց լիցենզիաներից: Նա այս հարցին անդրադարձել է նախագահական ինքնաթիռում Մեծ Բրիտանիայից ԱՄՆ վերադառնալիս լրագրողների հետ զրույցում, որի տեսանյութը տարածել է BBC-ն:

«Ես ինչ-որ տեղ կարդացել եմ, որ լրատվական ցանցերը 97%-ով դեմ էին ինձ, 97%-ով բացասաբար էին տրամադրված, այնուամենայնիվ, ես հաղթեցի (ընտրություններում) եւ հեշտությամբ», - ասել է Թրամփը:

Նա հավելել է, որ լրատվամիջոցներն իրեն միայն բացասական լույսի ներքո են ներկայացնում:

«Նրանք լիցենզիա են ստանում: Մտածում եմ, գուցե, նրանց լիցենզիան պետք է հետ վերցվի», - ասել է ԱՄՆ նախագահը:

Ամերիկյան ABC հեռուստաընկերությունն անորոշ ժամանակով դադարեցրել է հայտնի հեռուստահաղորդավար Ջիմի Քիմմելի մասնակցությամբ «Jimmy Kimmel Live» հաղորդումը՝ նրա վերջին հաղորդումներից մեկի ժամանակ պահպանողական ակտիվիստ Չարլի Քըրքի սպանության վերաբերյալ հայտարարությունների պատճառով: Քիմմելը տեսակետ էր հայտնել, թե Քըրքի սպանության կասկածյալը կարող է Թրամփի աջակիցներից մեկը լինել:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԸ՝ ԱՎԻՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Պետական բյուջեից 2 մլրդ դրամ կտրամադրեն փոքրամասնության «քաղաքապետին», իբր վերելակներ ու ավտոբուսներ գնելու համար: Այս մասին ֆեյսբուքյան իր էջում գրել է Երեւանի քաղաքապետարանի «Մայր Հայաստան» խմբակցության ավագանու անդամ Գեւորգ Ստեփանյանը:

«Երեւանի բյուջեն մսխողներին չի բավարարում 400 միլիոն դոլարը քանի որ աջ ու ձախ վատնելով կանգնել են փաստի առաջ:

Թանկացումների հեղինակները՝ տրանսպորտից մինչեւ աղբահանություն ու գույքահարկ, չեն կարողանում կառավարել քաղաքը արդյունավետ:

Փաշինյան-Ավինյան տանդեմը որոշել է, որ բացի քաղաքային բյուջեն, կարելի է նաեւ պետականը վատնել սեփական քմահաճույքով:

Քաղաքի 400 միլիոն դոլար ունեցող բյուջեի ճակատագիրը, կարող է արժանանալ ԱՆԻՖ-ի 20մլրդի ճակատագրին:

Քիչ մնաց՝ ալան-թալանի վերջը գալու է....

Գալու է քաղաքացու «վրեժի» ժամանակը ու դա լինելու է տեղական կամ համապետական ընտրություններին ակտիվորեն մասնակցելով ու մերժելով ներկա խայտառակ վիճակը»,-գրել է նա:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՍԱՀՄԱՆՎԵԼ ԵՆ ԼՅԱՎՈՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՆՈՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՆԳՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՆԱԽԱԳԻԾԸ

Հրդեհ, պայթյուն, կյանքին եւ առողջությանը սպառնացող այլ վտանգավոր իրավիճակներ: Այս ամենն իրական վտանգ է հասկացվում այն օբյեկտներում, որտեղ պահվում ու վաճառվում է հեղուկ վառելանյութ: Անվտանգության կանոնների խախտումը կարող է ծանր հետեւանքների պատճառ դառնալ թե՛ մարդկանց կյանքի, թե՛ շրջակա միջավայրի համար: Այս նպատակով ՆԳՆ նախարարության նախաձեռնությամբ սահմանվել են նոր ստանդարտներ, որոնք ուղղված են հեղուկ վառելանյութի լցավորման կայանների կառուցվածքի, անվտանգ շահագործման եւ հեղուկ վառելանյութի անվտանգ շրջանառության միասնական ու հստակ կանոնակարգմանը:



Սեպտեմբերի 18-ին Կառավարությունն ընդունել է «Ավտոտրանսպորտային միջոցների հեղուկ վառելանյութի լցավորման կայանների կառուցվածքի, հեղուկ վառելանյութի պահման, վաճառքի, պահեստավորման, առաքման, փոխադրման, բաշխման եւ լցավորման կայանների անվտանգ շահագործման տեխնիկական անվտանգության կանոնները սահմանելու մասին» որոշումը:

Որոշմամբ սահմանվում են ավտոտրանսպորտային միջոցների հեղուկ վառելանյութի (նավթաթորվածքներ, այդ թվում բենզինը եւ դիզելային վառելիքը) լցավորման կայանների կառուցվածքի, հեղուկ վառելանյութի պահման, վաճառքի, պահեստավորման, առաքման, փոխադրման, բաշխման եւ լցավորման կայանների անվտանգ շահագործման տեխնիկական անվտանգության կանոնները:

Հստակ սահմանվում են՝

1) ավտոտրանսպորտային միջոցների հեղուկ վառելանյութի լցավորման կայան շահագործող անձի կողմից իրականացման ենթակա միջոցառումները,

2) կայանների նախագծային փաստաթղթերում ներառման ենթակա տեքստային նյութերը,

3) դրանց կառուցմանը, շահագործմանն ու պահպանմանը, ինչպես նաեւ՝ վառելիքային համակարգի բաղադրիչներին եւ տեխնոլոգիական սարքավորումներին ներկայացվող պահանջները,

4) վառելանյութի առաքմանը եւ ավտոցիստեռներին ներկայացվող, ինչպես նաեւ՝ վառելիքի բաշխման պայմանները,

5) պահեստարաններին, փոխադրման խողովակաշարերին եւ էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջները:

Արդյունքում կձեւավորվի ավտոտրանսպորտային միջոցների հեղուկ վառելանյութի լցավորման կայանների շահագործման հստակ եւ միասնական համակարգ՝ նպաստելով պետական վերահսկողական գործառույթների կանխատեսելի եւ արդյունավետ իրականացմանը: Կարգավորումը կնպաստի նաեւ խիստ վտանգի աղբյուր հանդիսացող օբյեկտների չկանոնակարգված շահագործումից բխող ռիսկերի նվազեցմանն ու կառավարելի դարձնելուն:

Կառավարության որոշմամբ տրված լուծումները մշակվել են ինչպես ISO եւ ԵՄ ստանդարտների, եվրոպական մի շարք երկրների, այնպես էլ՝ ԵԱՏՄ երկրների կարգավորումների համադրմամբ:

Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից չորս ամիս հետո, որից հետո.

1) նոր շահագործվող կայանները պետք է համապատասխանեն նոր ստանդարտներին,

2) որոշումն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ նախագծման կամ կառուցապատման փուլում գտնվող լցակայանները պետք է համապատասխանեցվեն նոր ստանդարտներին,

3) որոշումն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ արդեն շահագործվող լցակայանները 1 տարվա ընթացքում պետք է համապատասխանեցվեն նոր ստանդարտներին:

ՀՀ ՆԳՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՀԱՅԱՏՆԱԲԵՐՎԵԼ Է ԻՆՔՆԱՁԻԳ

Համայնքային ոստիկանության Ամասիայի բաժնի ծառայողների բացատրական աշխատանքի արդյունքում սեպտեմբերի 9-ին 911 ծառայություն զանգած քաղաքացին հայտնել է, որ Ամասիա-Հողմիկ ճանապարհին զենք-զինամթերք է թողել:

Համայնքային ոստիկանները նշված վայրում հայտնաբերել են ինքնաձիգ, փամփշտատուփ, 7,62 մմ տրամաչափի 122 փամփուշտ, «Ֆ-1» տիպի նռնակ, նռնակի պայթուցիչ եւ տրոտիլ:

ՆԳՆ ոստիկանությունը հորդորում է ապօրինի պահվող զենք-զինամթերքը հանձնել կամավոր՝ քրեական պատասխանատվությունից խուսափելու համար:

ԲՅՈՒՐԱԿԱՆՈՒՄ ԱՎՏՈՄԵՔԵՆԱ Է ԱՅՐՎԵԼ

Սեպտեմբերի 19-ին՝ ժամը 05:33-ին Արագածոտնի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Բյուրական գյուղում այրվում է ավտոմեքենա:

Դեպքի վայր է մեկնել ՆԳՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ:

Պարզվել է, որ հրդեհը բռնկվել է գյուղի 31-րդ փողոցի տներից մեկի դիմաց կայանած «Mercedes-Benz» մակնիշի ավտոմեքենայում:

ԱՎՏՈՎԹԱՐ՝ ՇԻՆՈՒՀԱՅՐ ԳՅՈՒՂԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ

Սեպտեմբերի 19-ին՝ ժամը 12:23-ին Սյունիքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Շինուհայր գյուղի խաչմերուկում տեղի է ունեցել ՃՏՊ. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել ՆԳՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ:

Պարզվել է, որ Շինուհայր գյուղի խաչմերուկում բախվել են «Vaz» մակնիշի ավտոմեքենան եւ «Volvo» մակնիշի ավտոցիստեռնը, ինչի հետեւանքով «Vaz» մակնիշի ավտոմեքենայի վարորդը տեղում մահացել է:

Մինչ փրկարարների կանչի վայր հասնելը՝ վարորդի դին տեղի ուժերով դուրս են բերել մեքենայից, իսկ ուղեւորին մոտեցրել շտապօգնության ավտոմեքենային. վերջինս հոսպիտալացվել է բժշկական կենտրոն:

Փրկարարները հոսանքազրկել են «Vaz» մակնիշի ավտոմեքենան եւ փակել գազի բալոնի փականը:՝

ԻՐԱՎԻՃԱԿ

ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ՈՐԴԻՆ ՍՊԱՆԵԼ Է ՀՈՐԸ

Սեպտեմբերի 18-ին Գյումրիում, ըստ նախնական վարկածի, որդու կողմից հորը սպանելու դեպքից մանրամասներ են հայտնի դարձել: Մասնավորապես, որդին իրավապահներին պատմել է, որ վիճել են, հրել է հորը, հայրը ընկել է գետնին ու գրպանից հանել է դանակը ու ինքն է ինքնավնասել իրեն, մինչդեռ իրավապահների ձեռքում կան փաստեր, որ, ըստ նախնական վարկածի, որդին է սպանել հորը ու տարել, մարմինը թաքցրել:

Shamshyan.com-ի տեղեկություններով՝ կասկածյալը՝ Գյումրիում բնակվող 30-ամյա Արայիկ Գ.-ն, մարտի 19-ի լույս 20-ի գիշերը, իրենց տանը վիճաբանում է հոր՝ 64-ամյա Գարիկ Գ.-ի հետ, ինչը վերածվում է քաշքշուկի եւ ավարտվում սահմռկեցուցիչ սպանությամբ, ինչի արդյունքում հայրը մահանում է (նախաքննության շահերից ելնելով որոշ մանրամասներ չենք հրապարակում):

Ֆոտոլրագրողի տեղեկություններով՝նա հոր մարմինը մեկ օրից ավելի պահում է տանը, փոխում հագուստները, հորը հագցնում նոր շորեր, ապա փաթաթում պոլիէթիլենային տոպրակով, սավաններով եւ հաջորդ օրը գիշերը հոր մարմինը դուրս է բերում տնից եւ տանում Մուշ թաղամասին հարակից դաշտ, ու այնտեղ մի փոքր փոս է փորում, մարմինը նետում փոսի մեջ, հողով ու քարերով փակում, իսկ արյունոտված շորերն ու հանցագործության գործիք դանակը նետում է աղբամանը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է 69-ԱՄՅԱ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՄԱՐՄԻՆ

Սեպտեմբերի 18-ին ողբերգական դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 06:25-ի սահմաններում ՀՀ Ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Կենտրոնական բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Մոսկովյան փողոց 31 շենքի բնակարաններից մեկում տղամարդու դի կա: Այս մասին հայտնում է Shamshyan.com-ը:

Ոստիկաններն ու պարեկները նշված շենքի այդ բնակարանում հայտնաբերել են ՀՀ եւ ՌԴ քաղաքացի, 69-ամյա Վարդգես Գ-ի դին:

Դատաբժշկի նախնական եզրակացության համաձայն՝ արտաքին զննությամբ դիակի վրա բռնության հետքեր չեն հայտնաբերվել:

Դեպքի փաստով քննչական բաժնում սպանություն/հանկարծամահություն հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Քննիչի որոշմամբ նշանակվել է դիակի դատաբժշկական փորձաքննություն:

ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱՅՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ԹՄՐԱՄԻՋՈՑ

ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի անվտանգության ապահովման բաժնի ծառայողները սեպտեմբերի 18-ին ժամը 10:20-ի սահմաններում հանձնուքների ընդունման սենյակում զննության են ենթարկել դատապարտյալի անվամբ քաղաքացի Տ. Ղ.-ի կողմից բերված հանձնուքը: Արդյունքում՝ մեղրի տարայի միջից հայտնաբերել են թմրամիջոցի նմանվող, բաց շագանակագույն զանգված՝ ընդհանուր՝3.44 գրամ քաշով:

Քաղաքացին ձերբակալվել է Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի օպերատիվ վարչության տարածքային բաժնի ծառայողների կողմից եւ հայտնաբերվածի հետ ներկայացվել Արմավիրի մարզի քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 16-ից 17-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 250 դեպք, որից 10-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՔԱՄՈՒՑ ԱՆՆԱԽԱԴԵՊ ԹՎՈՎ ԾԱՌԵՐ ԵՆ ՏԱՊԱԼՎԵԼ

Դիլիջան համայնքի բնակիչները մեր թղթակցին հայտնեցին, որ այս տարի քամուց աննախադեպ մեծ թվով ծառեր են տապալվել, սակայն ազգային պարկի տարածքում թափված, քամատապալ ծառերը էժան գներով չեն տրվում համայնքի բնակիչներին:

Մինչդեռ, ինչպես փաստերով ցույց է տվել «Բնապահպանի տուն» նախաձեռնությունը, բնության հատուկ պահպանվող տարածք հանդիսացող Դիլիջանի ազգային պարկի տարածքում կանաչ, կանգուն ծառերի ապօրինի հատումները շարունակվում են:

ՍԱՐԵԲՈՒՄ 6,3 ԿՄ ՃԱՆԱՊԱՐՀ ԵՆ ՀԻՄՆԱՆՈՐՈԳԵԼ, ԻՍԿ ԴՐԱ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ 65.5 ԿԻԼՈՄԵՏՐԸ ՉԵՆ ՆՈՐՈԳՈՒՄ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցրել ենք. «Ո՞ր կազմակերպությունն է իրականացրել Ենոքավան-Կարմիրգյուղ ճանապարհի կառուցապատումը: Ե՞րբ է այդ ճանապարհը շահագործման հանձնվելու»:

Մարզպետարանից հայտնել են. «2024թ. ՀՀ պետական բյուջեի ծրագրով ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության պատվիրատվությամբ իրականացվել է՝ 6.3 կմ երկարությամբ(Մ-4) - Ենոքավան-Կարմիրգյուղ (գյուղատեղի) - (Հ-58) հանրապետական նշանակության ավտոճանապարհի (Ենոքավան տանող)հատվածի հիմնանորոգման աշխատանքները: Աշխատանքներն իրականացրել է «Ճանապարհ» ՍՊԸ-ն: Հանձնված է շահագործման: Այն համարվում է Մ-4-Ենոքվան-Կարմիր գյուղ-Հ-58 ճանապարհի սկզբնամաս, մնացած՝ 65.5 կմ հատվածի վերականգնման համար լիազոր մարմնի կողմից հաստատված ծրագիր չկա»:

Ի՞նչ է ստացվում. անցյալ տարի կատարել են Ենոքավան-Կարմիրգյուղ (գյուղատեղի) - հանրապետական նշանակության ավտոճանապարհի 6,3 կիլոմետր հատվածի հիմնանորոգում, իսկ ճանապարհի մնացած 65,5 կմ-ը չեն նորոգում:

Սա կոչվում է պետական բյուջեի մեծ փողերը քամուն տալ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵՆ

ԻՐԱՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ Է ԱՋԱԿՑԵԼ ՍԻՐԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Նյու Յորքում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի՝ սեպտեմբերի 18-ի նիստի ընթացքում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանն ու ՄԱԿ-ում մշտական ներկայացուցիչ Ամիր Սաիդ Իրավանին հայտարարել է, որ Իրանը վճռական է շարունակելու իր աջակցությունը Սիրիայի ժողովրդին՝ խաղաղության հաստատման, երկրի կայունության վերականգնման, վերակառուցման եւ ազգային հաշտեցման գործընթացներում: Իրավանին նշել է, որ այդ աջակցությունն ամբողջությամբ համահունչ է Սիրիայի ժողովրդի կամքին եւ հիմնված է Սիրիայի ինքնիշխանության, միասնության եւ տարածքային ամբողջականության նկատմամբ հարգանքի վրա:

Իր ելույթում Իրավանին նախ անդրադարձել է Սիրիայում առկա խորացող հումանիտար ճգնաժամին՝ընդգծելով, որ միլիոնավոր սիրիացիներ շարունակում են ապրել կենսական կարիքների սուր պակասի պայմաններում: Նա նշել է, որ այդ իրավիճակը հիմնականում պայմանավորված է Սիրիայի նկատմամբ կիրառվող միակողմանի հարկադրանքներով եւ միջազգային իրավունքի խախտմամբ սահմանված պատժամիջոցներով, որոնք լրջորեն խոչընդոտում են երկրի վերականգնումը, տնտեսության զարգացմանը եւ փախստականների անվտանգ վերադարձին: Իրավանին հորդորել է միջազգային հանրությանը՝ դադարեցնել այս «ապօրինի եւ անարդար» միջոցները, որոնք նպաստում են սիրիացի ժողովրդի տառապանքների խորացմանը:

Խոսելով անվտանգության հարցերի մասին՝ Իրավանին ընդգծել է, որ Սիրիայում զինված բախումները եւ ահաբեկչական խմբավորումների, այդ թվում՝ Դաեշի եւ Ալ-Քաիդայի մնացորդների գործողությունները շարունակում են վտանգել թե՛ երկրի, եւ թե՛ տարածաշրջանի խաղաղությունն ու կայունությունը: Նա առանձնահատուկ ուշադրություն է հրավիրել Իսրայելի կողմից Սիրիայի տարածքի նկատմամբ իրականացվող ռազմական հարվածների վրա՝ դրանք որակելով որպես ագրեսիայի ակտեր եւ միջազգային իրավունքի կոպիտ խախտումներ: Դեսպանը կոչ է արել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին չլռել այս խախտումների առջեւ եւ պատասխանատվության ենթարկել Իսրայելի իշխանություններին:

Իրավանին իր խոսքում անդրադարձել է նաեւ Սիրիայի քաղաքական գործընթացին՝ նշելով, որ տեւական խաղաղություն կարող է հաստատվել միայն այն դեպքում, երբ այդ գործընթացը լինի ամբողջությամբ սիրիացիների կողմից ղեկավարվող եւ սեփական շահերից բխող՝ առանց արտաքին միջամտության կամ ճնշումների: Նա նախազգուշացրել է, որ ցանկացած փորձ՝ արտաքին օրակարգ պարտադրելու կամ երկրում դաշնայնացման գաղափար առաջ տանելու ուղղությամբ, կարող է խաթարել Սիրիայի տարածքային ամբողջականությունը եւ վտանգել ազգային միասնությունը: Միաժամանակ, Իրավանին ողջունել է ՄԱԿ-ի հատուկ բանագնացի վերջին դիվանագիտական շփումները Սիրիայի իշխանությունների հետ՝ ընդգծելով համապարփակ եւ ներառական քաղաքական երկխոսության անհրաժեշտությունը:

Ամփոփելով իր խոսքը՝ Իրավանին վերահաստատել է Իրանի պատրաստակամությունը շարունակելու համագործակցությունը սիրիացի ժողովրդի հետ՝ միեւնույն ժամանակ վերահաստատելով, որ բոլոր արտաքին ուժերը պետք է հարգեն Սիրիայի ինքնիշխանությունը եւ զերծ մնան երկրի ներքին գործերին միջամտելուց:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ԱՄՆ–Ն ԿՐԿԻՆ ՎԵՏՈ Է ԿԻՐԱՌԵԼ ԳԱԶԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԱՆԱՁԵՎԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Միացյալ Նահանգները վետո է կիրառել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձեւի նախագծի նկատմամբ, որը պահանջել է «անհապաղ, անվերապահ եւ մշտական» հրադադար հաստատել Գազայի հատվածում, ինչպես նաեւ վերացնել Իսրայելի կողմից պաղեստինյան այդ տարածաշրջան մարդասիրական օգնություն հասցնելու բոլոր սահմանափակումները: Այդ մասին հաղորդել է Reuters-ը՝հավելելով, որ վեցերորդ անգամ է Վաշինգտոնը վետո կիրառում նման փաստաթղթի նկատմամբ:

«Միացյալ Նահանգները մերժում է այս անընդունելի բանաձեւը: Ժամանակն է, որ ՀԱՄԱՍ-ը անհապաղ ազատ արձակի բոլոր պատանդներին՝ առանց բացառության եւ անվերապահորեն հանձնվի: Միացյալ Նահանգները կշարունակի համագործակցել իր գործընկերների հետ՝ այս սարսափելի հակամարտությունը դադարեցնելու համար»,- ասել է ՄԱԿ-ում ԱՄՆ մշտական ներկայացուցիչ Մորգան Օրտագուսը՝ հիմնավորելով Դոնալդ Թրամփի վարչակազմի որոշումը:

Բանաձեւի նախագիծը պատրաստել են ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 15 անդամից 10-ը: Բացի Միացյալ Նահանգներից՝ մնացած 14 պետություններն աջակցել են փաստաթղթին:

ԹՐԱՄՓԸ ՔՆՆԱՐԿԵԼ Է ՊՈՒՏԻՆԻ ՎՐԱ ՃՆՇՈՒՄ ԳՈՐԾԱԴՐԵԼՈՒ ՀԱՐՑԸ

Մեծ Բրիտանիա կատարած իր պետական այցի վերջին օրը ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հանդիպել է վարչապետ Քիր Սթարմերի հետ: Նրանց բանակցությունների հիմնական թեմաներից մեկը Ուկրաինայում պատերազմի դադարեցումն է եղել՝գրում է BBC-ն:

Նախագահ Թրամփի հետ համատեղ մամուլի ասուլիսում Մեծ Բրիտանիայի վարչապետը հայտարարել է ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի վրա ճնշումն ուժեղացնելու անհրաժեշտության մասին՝ Ուկրաինայում խաղաղության հասնելու համար:

ԱՄՆ նախագահը խոստովանել է, որ պատերազմի ավարտն ավելի դժվար էր, քան ինքը կարծում էր, եւ որ Պուտինը հիասթափեցրել է իրեն: Նա հստակեցրել է, որ սպասում է, թե եվրոպական երկրները երբ կնվազեցնեն իրենց կախվածությունը ռուսական նավթից, նախքան ինքը կուժեղացնի ճնշումը Պուտինի վրա: «Ես պատրաստ եմ այլ միջոցների դիմել, բայց ոչ այն դեպքում, երբ մարդիկ, որոնց համար պայքարում եմ, նավթ են գնում Ռուսաստանից»,- ասել է Թրամփը:

Երկու առաջնորդները խոսել են նաեւ ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի միջեւ «հատուկ հարաբերությունների» եւ «անխզելի կապի» մասին, ստորագրել արհեստական բանականության, քվանտային հաշվարկների եւ միջուկային էներգիայի ոլորտներում համագործակցության համաձայնագիր:

Մի քանի ամերիկյան ընկերություն արդեն հայտարարել է Մեծ Բրիտանիայում զգալի ներդրումներ կատարելու ծրագրերի մասին. Microsoft-ը խոստացել է 30 միլիարդ դոլար, Google-ը՝5 միլիարդ դոլար, իսկ Nvidia-ն՝ 500 միլիոն դոլար:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 52 պատահար, 3 մարդ մահացել է, 83-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ-Ն 1.5 ՄԼՐԴ ԴՈԼԱՐ ԿՀԱՏԿԱՑՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԱՄՆ իշխանությունները 1.5 միլիարդ դոլար են տրամադրել սեփական միջուկային վառելիքի արտադրության կազմակերպման համար՝ պաշտպանության նպատակներով: Այս մասին հայտնում է Reuters-ը:

ԱՄՆ ազգային միջուկային անվտանգության վարչության կողմից ուրանի հարստացման ներքին հզորությունների զարգացման պայմանագիրն ստացել է BWX Technologies ընկերությունը: Կիսաինքնավար միջուկային գործակալությունը, որը գործում է էներգետիկայի նախարարության կազմում, նպատակ ունի ապահովել ցածր հարստացված ուրանի վստահելի մատակարարումներ՝ տրիտիումի արտադրության համար, եւ բարձր հարստացված ուրանի՝ ռազմածովային միջուկային շարժիչների համար: Ավելի վաղ նույն ընկերությունը 2.6 միլիարդ դոլարի պատվեր էր ստացել՝ միջուկային սուզանավերի եւ ԱՄՆ ռազմածովային ուժերի ավիակիրի բաղադրիչների արտադրության համար:

Միջուկային վառելիքի արտադրության գործարանը կտեղակայվի Թեննեսի նահանգի Էրվին քաղաքում:

ԱՄՆ էներգետիկայի նախարար Քրիս Ռայթը, ՄԱԳԱՏԷ-ի տարեկան գլխավոր համաժողովում հանդես գալով, նշել է, որ ռուսական ուրանից ամբողջությամբ հրաժարվելը հնարավոր չէ, սակայն ԱՄՆ-ն «մոտենում է այդ պահին»:

«Մենք ակնկալում ենք ուրանի սպառման արագ աճ ԱՄՆ-ում, ինչպես խոշոր, այնպես էլ փոքր մոդուլային ռեակտորներում: Ժամանակի ընթացքում այս պահուստի ծավալը կաճի: Մեզ անհրաժեշտ է շատ սեփական ուրանի պաշար եւ հարստացման հզորություններ», - ընդգծել է նախարարը:

ՄԻՋԻՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ՝ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Վրաստանում 2025 թվականի երկրորդ եռամսյակում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 10.3%-ով կամ 207.1 լարիով՝ 2024 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ:

Պատմական առավելագույն ցուցանիշը գրանցվել էր 2024 թվականի չորրորդ եռամսյակում, երբ միջին աշխատավարձը կազմել էր 2 217.5 լարի:

Ամենաբարձր աշխատավարձերը արձանագրվել են հետեւյալ ոլորտներում՝

հեռահաղորդակցություն եւ կապ - 4 176.5 լարի (+5.4% տարեկան),

ֆինանսական եւ ապահովագրական գործունեություն - 3 732.2 լարի (+2.5%),

շինարարություն - 3 467.7 լարի (+17.7%),

գիտական եւ տեխնիկական գործունեություն - 2 995.3 լարի (+4.3%):

Տղամարդիկ միջինը վաստակում են 2 655.8 լարի, ինչը 10%-ով կամ 242.3 լարիով ավելի է, քան մեկ տարի առաջ:

Կանայք վաստակում են 1 769,.5 լարի: Աճը կազմել է 11.3% կամ 179.3 լարի:

ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՎԶԵԲԸ ԵՎ ԵՄ-Ն ԱՋԱԿՑՈՒՄ ԵՆ ՄԱՔՍԱՅԻՆ ԵՎ ԼՈԳԻՍՏԻԿ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՄԱՆԸ

Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ) 39 միլիոն եվրոյի պետական երաշխիքով վարկ է տրամադրում՝ Երեւանի (Հայաստան) ծայրամասում մաքսային եւ լոգիստիկ նոր կենտրոնի (ՄԼԿ) կառուցման ֆինանսավորման նպատակով, որը համալրվում է Եվրոպական միության կողմից տրամադրվող 6 միլիոն եվրոյի դրամաշնորհով:

Նոր կենտրոնը կփոխարինի մայրաքաղաքում գործող մի շարք առանձին սպասարկման կենտրոններին, ինչը հնարավորություն կընձեռի բարձրացնել արդյունավետությունը եւ թափանցիկությունը՝ բարելավելով սպասարկման որակը եւ կրճատելով մաքսային ձեւակերպման համար պահանջվող ժամանակը: Սկանավորման եւ հսկողության համար բարձրորակ սարքավորումներն էապես կբարձրացնեն արդյունավետությունը եւ կարագացնեն գործընթացները՝ մաքսային գործառնությունների համար ներդնելով «մեկ պատուհանի» սկզբունքը: Նոր կենտրոնը կուժեղացնի տարածաշրջանային կապակցվածությունը եւ կօժանդակի առեւտրին՝ նպաստելով տնտեսական զարգացման ավելի ընդգրկուն նպատակների ապահովմանը:

Կենտրոնը նաեւ կհանդիսանա Հայաստանում առաջին հասարակական շենքերից մեկը, որը «կանաչ շենքերի» հավաստագրում կստանա՝ զգալիորեն բարձրացնելով էներգաարդյունավետությունը : Մաքսային գործառնությունները մայրաքաղաքից դուրս տեղափոխելը եւ դրանք մեկ տանիքի տակ բերելը կբեռնաթափի երթեւեկությունը, կբարելավի օդի որակը եւ մեկ-երրորդով կկրճատի բեռնափոխադ-րումների հետ կապված ջերմոցային գազերի արտանետումները:

Երեւանը ՎԶԵԲ-ի «Կանաչ քաղաքներ» ծրագրին միացած առաջին քաղաքներից մեկն էր, եւ այս նախագիծը ներկայացնում է «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի (GCAP) շրջանակներում ներդրումների շարունակությունը: Մաքսային գործառնությունները ժամանակակից, էներգաարդյունավետ կենտրոնում համախմբելով՝ քաղաքը լուծում է բնապահպանական առանցքային մարտահրավերները: Այս ֆինանսավորումը նաեւ 2025թ-ի համար ԵՄ «Global Gateway» (Գլոբալ դարպասներ) դրոշակակիր նախաձեռնություն-ներից մեկն է ԵՄ տնտեսական եւ ներդրումային ծրագրի շրջանակներում, եւ ինչպես Հայաստանում, այնպես էլ տարածաշրջանում ցուցադրում է ռազմավարական ներդրումների եւ կայուն զարգացման իմաստով Եվրոպական Միության հանձնառությունը:

Բացի այդ, Բանկի եւ Թայվանի Բիզնես - ՎԶԵԲ-ի Տեխնիկական հիմնադրամի աջակցությամբ կիրականացվի մաքսային վարչարարության շրջանակներում թվային ուսուցման ներդրման համազգային ծրագիր, որը բարելավի թվային գրագիտությունը եւ նոր աշխատատեղեր կստեղծի ամբողջ Հայաստանում:

1992 թվականին իր գործառնությունները Հայաստանում մեկնարկելուց ի վեր ՎԶԵԲ-ը ավելի քան 2.5 միլիարդ եվրոյի ներդրումներ է կատարել 231 ծրագրերի շրջանակներում:

Տարածքը նաեւ կլինի Հայաստանի առաջին հանրային շենքերից մեկը, որը կստանա կանաչ շինարարության հավաստագիր՝ զգալիորեն բարձրացնելով էներգաարդյունավետությունը:

Գ

ՌԴ ԱԳՆ ՊԱՇՏՈՆՅԱՅԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Երեւանի ներկայիս գործողությունները չեն հակասում Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) առջեւ ստանձնած պարտավորություններին: ՏԱՍՍ-ին այս մասին ասել է Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության ԱՊՀ երկրների առաջին դեպարտամենտի տնօրեն Միքայել Աղասանդյանը:

Նա նշեց, որ մինչ այժմ Հայաստանի հայտարարությունները Եվրամիությանը միանալու մտադրության մասին միայն «քաղաքական հռչակագրեր» են:

«Միեւնույն ժամանակ, բազմիցս ընդգծվել է, այդ թվում՝ Օվերչուկի կողմից, որ երկու միավորումների միաժամանակ անդամ լինելը անհնար է՝ դրանց բնույթից ելնելով», - նշել է Աղասանդյանը:

«Ներկայումս Հայաստանի գործողությունները չեն հակասում ԵԱՏՄ-ի շրջանակներում նրա պարտավորություններին: Մենք կշարունակենք հետեւել գործնական քայլերին: Ոչ ոք չի արգելում Հայաստանին համագործակցել այլ երկրների հետ. ԵԱՏՄ բոլոր անդամներն էլ դա անում են: Գլխավորն այն է, որ նման համագործակցությունը չհակասի Միության շրջանակներում նրա պարտավորություններին: Առայժմ դա այդպես չէ»:

Դիվանագետի խոսքով՝ միությանը Հայաստանի մասնակցության բնույթը չի փոխվել եւ մնում է կառուցողական: Երկիրը «ակտիվորեն աշխատում է ԵԱՏՄ-ում եւ տեսնում է իր մասնակցությունից օգուտներ»:

«Այո, առեւտուրը նվազել է, բայց սա անկայուն իրավիճակ է: Նախկինում աճ էր նկատվում, բայց հիմա ամեն ինչ վերադառնում է ավելի բնականոն հունի:

Եթե նայենք վերջին տարիների դինամիկային, ապա 2015 թվականին ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցությունից ի վեր, գործընկերների հետ նրա առեւտուրը կտրուկ աճել է»:

ՊԵԿ-Ի ՀՈՐԴՈՐԸ

Պետական եկամուտների կոմիտեն տեղեկացնում է, որ շարունակվում է ուժեղացված մաքսային հսկողությունը՝ բջջային հեռախոսների ներմուծման նկատմամբ:

ՊԵԿ էլեկտրոնային առեւտրի եւ օդային տրանսպորտով իրականացվող փոխադրումների վարչությունը հորդորում է Հայաստան ժամանող քաղաքացիներին Հայաստան տեղափոխել բացառապես իրենց կողմից ձեռքբերված եւ իրենց պատկանող բջջային հեռախոսներ:

Միաժամանակ, Կոմիտեն կոչ է անում քաղաքացիներին հրաժարվել այլ երկրների օդանավակայաններում բջջային հեռախոսներ Հայաստան տեղափոխելու մեր հայրենակիցների առաջարկներից եւ խուսափել դրանք Հայաստանում անծանոթ անձանց փոխանցելուց: Նման գործողությունները կարող են մաքսային հսկողության ընթացքում խնդիրներ առաջացնել եւ դիտարկվել որպես քողարկված ձեռնարկատիրական գործունեություն, որտեղ անուղղակիորեն կարող են ներգրավվել նաեւ ՀՀ ժամանող քաղաքացիները:

ՊԵԿ-ը հիշեցնում է՝ զարտուղի ճանապարհով առեւտրային նշանակության բջջային հեռախոսների ապօրինի ներմուծումը Հայաստանի Հանրապետություն կանխարգելելու նպատակով, մաքսային ծառայությունը սահմանին իրականացնում է խիստ վերահսկողություն՝ կանխելով քաղաքացիների անօրինական գործունեությունը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ 200

ԲԱՑԱՌԻԿ ՆՄՈՒՇՆԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Գաբրիել Սունդուկյանի 200-ամյակի առթիվ Մայր թատրոնում, որը կրում է դրամատուրգի անունը, սեպտեմբերի 18-ից ցուցադրվում են Սունդուկյանի անձնական իրերը՝ ձեռնափայտը, խոշորացույցը, գրասեղանը, կահույքի այլ պարագաներ, լուսանկարներ, որոնք արվեստասերներին թույլ են տալիս մտովի գնալ անցյալ, զգալ ժամանակի շունչը:



«Արմենպրես» լրատվականի հաղորդմամբ՝ բացառիկ ցուցանմուշները, որոնք Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում կհյուրընկալվեն մինչեւ նոյեմբերի 1-ը, Եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի հավաքածուից են:

Թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Էլբակյանը խոստովանում է՝նայում է «Գաբրիել Սունդուկյան 200» խորագրով ցուցահանդեսի ցուցանմուշներին ու մտածում՝ եթե անգամ մեկ իր ներկայացված լիներ, հասկանալի կլիներ, թե ով է Գաբրիել Սունդուկյանն ու ինչ մեծ գործ է արել հայ եւ վրաց թատրոնների կազմավորման համար:

«Նա գեղագիտական մտածողություն է ստեղծել: Գուցե նրա դրամատուրգիան չի անցել մեր տիրույթի սահմանները, բայց հավատացեք, որ նա կարողացել է ստեղծել այնպիսի կերպարների գալերեա, որ քչերին է հաջողվում: Համարձակորեն կարող եմ նրան համեմատել Մոլիերի, Ֆեյդոյի հետ, դրամատուրգների, որոնց աշխարհն է ճանաչում: Պատահում է, որ լեզուն կամ տարածաշրջանը հնարավորություն չեն տալիս համաշխարհային ճանաչում ձեռք բերել, այնինչ Սունդուկյանը մեծ բան է արել ապագա սերունդների համար: Ես նորից ու նորից գալիս եմ այն համոզման, որ, եթե մենք չճանաչենք մեր անցյալը, երբեք չենք կարողանա հասկանալ մեր ներկան, իսկ Սունդուկյանի որոշ ստեղծագործություններ՝ «Քանդած օջախ», «Պեպո», բարձրացնում են բարոյական հարցեր, ներկայացնում են այդ եւ բոլոր ժամանակների քաոսը, որից մարդիկ փորձում են ազատագրվել, բայց, ցավոք սրտի, դա մի մարդու գործ չէ. բոլորս պետք է կարողանանք այս հավիտենական քաոսից, որն աշխարհը, մարդն են ստեղծել, գտնել ելքեր, որպեսզի բոլոր բարոյական չափանիշները, հանուն որոնց ստեղծագործել են Սունդուկյանը եւ թատրոնները, հնարավոր լինի փոխանցել մեզնից հետո եկողներին»,-շեշտում է Էլբակյանը:

Նրա խոսքով՝ Սունդուկյանն անգամ Թիֆլիսի բարբառով Մոլիերի մի քանի պիես է թարգմանել: «Բոլորս պարտական ենք Գաբրիել Սունդուկյանին, որ ունեցել ենք այն թատրոնը, որ կար՝ չմոռանալով մեր մեծերին, եւ թատրոն, որը կա: Խոսքը միայն մեր թատրոնի մասին չէ, այլեւ այն թատրոնի, որն իր մտածողությամբ հիմնադրեց Սունդուկյանը ոչ միայն հայերի, այլեւ ամբողջ Կովկասի համար: Շնորհակալ ենք մեծ գրողին, հայ պրոֆեսիոնալ թատրոնի հիմնադրին: Հաջողություն եմ մաղթում մեզ մեր գործի մեջ, որպեսզի կարողանանք ստացած ժառանգությունը փոխանցել սերունդներին»,-ընդգծում է թատրոնի գեղարվեստական ղեկավարը:

Գրականության եւ արվեստի թանգարանի թատերական բաժնի վարիչ Նաիրա Շահվալադյանը հիշեցնում է՝այս տարի ոչ միայն լրանում է Սունդուկյանի ծննդյան 200-ամյակը, այլեւ նրա գլուխգործոցի՝ «Պեպո»-ի 150-ամյակն ու ֆիլմի 90-ամյակը:

Նա կարծում է՝ քիչ են ստեղծագործողները, որոնց կյանքը նույնքան հետաքրքիր է, որքան ստեղծածը: Սունդուկյանին բացառիկներից է համարում:

Նոյեմբերին թատրոնում կանցկացվի Երեւանյան միջազգային թատերական փառատոնը, որը Մայր թատրոնի միջազգային հիմնական ծրագրերից է:

Փառատոնին ԱՄՆ-ից չորս ներկայացում կցուցադրվի, չի բացառվում, որ Երեւանում հանդես գա Թուրքիայի հայկական թատրոնը, բանակցություններ են վարվում իտալական, ֆրանսիական թատերախմբերի հետ, ինչպես նաեւ գերմանացի խորեոգրաֆ Սաշա Վալցի հետ՝ Երեւանում պարային թատրոն ներկայացնելու համար:

Մկրտչյանի խոսքով՝ արդեն փաստ է թատրոնի ստուդիայի վերաբացումը: Ականատես են եղել ստուդիայի սաների գրանցած արդյունքներին, որոնք հուսադրող են համարում:

«Այս թատրոնը չի կարող չունենալ ստուդիա: 1966 թվականին թատրոնում ստուդիա է հիմնել Վարդան Աճեմյանը: Մենք էլ պետք է փորձենք նոր շունչ հաղորդել ստուդիային եւ բարձրացնել նրա մակարդակը»,-նշում է տնօրենն ու հավելում՝ նախատեսում են շարունակել նաեւ կրթական ծրագրերը:

Ցուցադրությունը դիտելու էր եկել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը: Նա խոստովանում է՝ միշտ ուրախ է հյուրընկալվել երկրի Մայր թատրոնում:

«Կա կարծրատիպ, որ ակադեմիական, դասական թատրոնը պետք է շատ ավանդական, ավանդապաշտ լինի, բայց արի ու տես, որ մեր թատրոնը տարբեր նախաձեռնություններով է հանդես գալիս ու հաճախ է ներկայանում նորարարություններով: Նախորդ տարի թատրոնում բացվեց «Պաննո» հարթակը, որում հրաշալի ձեւաչափով միջոցառումներ են անցկացվում: Սրահում հիմնականում հյուրընկալվում են երիտասարդները, որոնք գուցե ինքնաբուխ չգան թատրոն, սակայն թատերական միջավայրի շնորհիվ նրանց ենք փոխանցում սերը թատրոնի հանդեպ եւ հույս ունենք, որ նրանց հաջորդ քայլը կլինի տոմս գնելն ու թատրոն գնալը»,-նշում է Դանիելյանը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ՝ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆՆ ԸՆԴԱՌԱՋ

ՀՀ անկախության տոնին ԿԳՄՄՆ ենթակայության տարբեր մշակութային հաստատություններում նախատեսվում են մի շարք միջոցառումներ:

Այս մասին հայտնում են Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունից:

ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ սեպտեմբերի 21-ին Հայաստանի պատմության թանգարանում կբացվի «Սրբազան երկխոսություն. Լուվրից Հայաստանի պատմության թանգարան» խորագրով աննախադեպ միջազգային ցուցահանդեսը: Այս բացառիկ ցուցահանդեսի շրջանակում առաջին անգամ Հայաստանում կցուցադրվեն Լուվրի թանգարանի հավաքածուներից 16 ուշագրավ ցուցանմուշներ, որոնք կհամադրվեն Հայաստանի պատմության թանգարանի երկու տասնյակից ավելի արժեքավոր թանգարանային առարկաների հետ: Առանձնակի է ներկայացվելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից փոխառված Սուրբ Բարդուղիմեոս առաքյալի մասունքարանը: Ցուցահանդեսը կգործի 6 ամիս՝ մինչեւ 2026 թվականի մարտ ամիսը:

ԿԳՄՍ նախարարության եւ Հայաստանի հանրային հեռուստաընկերության համագործակցությամբ սեպտեմբերի 21-ին Արմավիր քաղաքում կայանալու է «Ֆեստիվառ» փառատոնը՝Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի նվագակցությամբ:

Անկախության տոնին ընդառաջ՝ միջոցառումներ են նախատեսված նաեւ տոնի նախընթաց օրերին. սեպտեմբերի 20-ին՝ ժամը 19:00-ին, Կամերային երաժշտության ազգային կենտրոնի դահլիճում իրականացվելու է «Էս գիշեր, աշնան գիշեր» խորագրով համերգ: Սեպտեմբերի 19-ին եւ 20-ին Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի կողմից եւս իրականացվելու են համերգներ՝ նվիրված ՀՀ անկախությանը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄՆ ԱՎԱՐՏՎԵՑ 3-3

Զագրեբում ընթացող հունահռոմեական ըմբշամարտի աշխարհի առաջնության քառորդ եզրափակիչում Օլիմպիական խաղերի ոսկե, կրկնակի արծաթե եւ բրոնզե մեդալակիր, աշխարհի քառակի չեմպիոն, Եվրոպայի յոթակի չեմպիոն Արթուր Ալեքսանյանը (97 կգ) տուշեով պարտություն կրեց:

Արթուրը մրցեց 2023 թ. Եվրոպական խաղերի փոխչեմպիոն, ադրբեջանցի Մուրադ Ահմադիեւի հետ: Հանդիպումն ավարտվեց 3:3 հաշվով՝ հօգուտ Ահմադիեւի:

Ադրբեջանցու եզրափակիչ դուրս գալու դեպքում Ալեքսանյանը հնարավորություն կունենա սփոփիչ գոտեմարտ անցկացնելու՝ բրոնզե մեդալի համար:

ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես արդեն տեղեկացրել էինք, երեկ՝ սեպտեմբերի 18-ին, Երեւանում կայացավ Հայաստանի եւ Հունաստանի մինչեւ 17 տարեկանների հավաքականների երկրորդ հանդիպումը:

Խաղն ավարտվեց մարտական ոչ-ոքիով՝ 2:2 հաշվով: Խաղից հետո ՀՖՖ-ի մամուլի ծառայությանը մեկնաբանություններ տվեցին խաղում աչքի ընկած ֆուտբոլիստները:

«Ես շատ վստահ էի իմ ուժերի վրա, վերցրի գնդակը եւ գիտեի, որ գոլ եմ խփելու: Ստացվեց: Առաջին խաղում մի փոքր անվստահ էինք, բայց երկրորդ խաղում վստահությունն ավելացավ, եւ մենք ավելի լավ արդյունք գրանցեցինք»,- նշել է Արմեն Ղազարյանը:

«Խաղի սկզբից զգում էի, որ կարող եմ գոլ խփել: Եկավ այդ պահը, խփեցի գոլս: Իհարկե, մեկ այլ պահի չստացվեց խփել, բայց նման բաներ լինում են ամեն խաղում: Մինչեւ վերջ հավատացի եւ գնացի առաջ, ու խփեցի գոլս: Թիմակիցներս շատ լավ ենք հասկանում միմյանց: Իմ կարծիքով, թիմային շահերն ավելի կարեւոր են, քան անհատականը: Կարեւոր է հավատալ եւ՛ ինքներս մեզ, եւ՛ մեր ընկերներին, եւ՛ մարզիչներին»,- ասել է Միեր Հարությունյանը:

ՉԼ ԱՂՅՈՒՍԱԿԸ

«Մանչեսթեր Սիթիի» հարձակվող Էրլինգ Հալանդը «Նապոլիի» դեմ առաջին տուրի խաղում խփել է իր 50-րդ գոլը Չեմպիոնների լիգայում:

Նորվեգացի ֆուտբոլիստը դա արել է իր 49-րդ խաղում՝ դառնալով մրցաշարի պատմության ամենաարագ խաղացողը, ով հասել է այդ նշաձողին: Հալանդը գոլը խփել է խաղի 56-րդ րոպեին:

Նախկին ռեկորդը պատկանում էր «Մանչեսթեր Յունայթեդի» եւ Մադրիդի «Ռեալի» նախկին հարձակվող Ռուդ վան Նիստելրոյին, ով 50 գոլ էր խփել 62 խաղում:

Այս պահին «քաղաքացիների» 25-ամյա հարձակվողը Չեմպիոնների լիգայի լավագույն ռմբարկուների ցուցակում 9-րդ տեղն է կիսում «Արսենալի» եւ «Բարսելոնայի» նախկին հարձակվող Թիերի Անրիի հետ:

● *Սեպտեմբերի 24-ին՝ 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Փարիզյան դատավճիռ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000, 4.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ՀՈԳԵՎՈՐ

Հարց. Զարշարանքների ժամանակ Որդին ասաց Հայր Աստծուն. «Հայր, եթե կամենում ես, այս բաժակը ինձանից հեռացրու, բայց ոչ թե իմ կամքը, այլ Քո՛նը թող լինի» (Ղուկ. 22:42): Եվ երկնից հրեշտակ երեւաց, որ զորացնում էր Նրան: Այսինքն՝ հրեշտակը հայտնում էր, թե Հայր Աստծո կամքը Հիսուսի մահն է՝ աշխարհի փրկության համար: Արդ, որովհետեւ Քրիստոս է Հայր Աստծո իմաստությունը, գիտեր Նրա կամքը, ապա ինչո՞ւ է թվում, թե հրեշտակից իմացավ:

Նիկոլայ Մնացականյան (37 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քրիստոս աստվածությամբ հավասար է Հայր Աստծուն, բայց մարդեղությամբ փոքր, քան հրեշտակները (Եբր. 2:9): Եվ որովհետեւ, ըստ սովորության, փոքրը, Աստծո կարգադրությամբ, մեծից է ուսանում, դրա համար Աստվածորդին, ինչպես ջարհամարհեց Իր կողմից հաստատված թլպատության օրենքը, նույնպես եւ անարատ պահեց Իր կողմից սահմանված կանոնը՝ կամենալով հրեշտակների միջնորդությամբ սովորել: Եվ մանավանդ, օրինակ տալու համար առաքյալներին, թե բոլոր պարգեւները, որ ի վերուստ են իջնում ներքեւում գտնվողների համար, կարգով եւ աստիճանով են: Ինչպես մի թագավորի զավակ, թեպետ նախօրոք գիտի իր հոր կամքը, բայց դեսպանի միջոցով հարցնում է ու տեղեկանում, որ տեսնողներն ու լսողները չկասկածեն, թե գործը հոր կամքին հակառակ է կատարել:

Նմանապես եւ Քրիստոս՝ Երկնավոր Հոր Որդին, գիտեր Հոր կամքը, որովհետեւ Իր եւ Հոր կամքը մեկ էր: Սակայն, որպես մարդ, կամեցավ տնօրինաբար իմանալ եւ սովորել: Այն, որ մարդասիրության պատճառով նվաստություն չհամարեց Իրեն՝ մարդանալով շրջել երկրի վրա, ուստի նաեւ ամոթ չհամարեց մարդկայնորեն հարցնելը:

Արարատյան հայրապետական թեմ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Այս հարցին գեղեցիկ պատասխան է տալիս Սուրբ Դիոնիսիոսը: Ահա նրա բուն շարադրանքը, որտեղ ասում է. «Հիսուս Ինքը, որ գերագույն էությամբ պատճառ է երկնային էությունների, մեր բնությամբ անփոխադարձաբար գալով՝ չի խուսափում Իր կարգած եւ ընտրած մարդավայել բարեկարգությունից, այլ կամավոր հոժարությամբ հնազանդվում է Հայր Աստծուն՝ հրեշտակների ազդեցությամբ»:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՔՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ, թե ինչպես է լուծվում աշխատանքային պայմանագիրը կողմերի համաձայնությամբ:

Ռիտա Հարությունյան (42 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ աշխատանքային պայմանագիրը կողմերի համաձայնությամբ լուծելիս, մի կողմը գրավոր առաջարկում է մյուս կողմին՝ լուծելու պայմանագիրը: Համաձայնության դեպքում մյուս կողմը 7 օրվա ընթացքում պետք է ծանուցի առաջարկ ներկայացրած կողմին, որից հետո կնքվում է գրավոր համաձայնագիր:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ. Աշխատանքային պայմանագիրը գործողության ժամկետը լրանալու պատճառով լուծելիս, աշխատողը կամ գործատուն պետք է առնվազն 10 օր առաջ ծանուցի մյուս կողմին: Եթե ժամկետը լրանալուց հետո պայմանագիրը չի լուծվում եւ աշխատանքային հարաբերությունները շարունակվում են, ապա պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Shamshyan.com-ի

Երեկ կայծակի հարվածից Արտաշատ խոշորացված համայնքի Այգեզարդ բնակավայրի անասնագոմում 8 կով է սատկել. գյուղացիներին պատճառվել է մի քանի միլիոնի վնաս:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 2 + 6 +13 + 16
Կոտայքի լեռներ	+ 2 + 5 +13 + 15
Կոտայքի նախալեռներ	+ 8 + 11 +17 + 20
Գեղարքունիք	+ 3 + 7 +10 + 13
Լոռի	+ 6 + 11 +13 + 16
Տավուշ	+10 + 13 +17 + 20
Արագածոտնի լեռներ	+ 2 + 6 +12 + 15
Արագածոտնի նախալեռներ	+ 8 + 11 + 17+ 21

Արարատ	+9 + 13 +20 + 23
Արմավիր	+10 + 14 +20 + 24
Վայոց ձորի լեռներ	+ 3 + 7 +12 + 14
Վայոց ձորի նախալեռներ	+10 + 14 +20 + 24
Սյունիքի հովիտներ	+13+ 17 +18 + 22
Սյունիքի նախալեռներ	+ 8 + 10 +15 + 18
ԼՂՀ	+12+ 16 +27 + 21
Երեւան	+17 + 19 +16 + 18

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **19.9.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*